

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ՆՐԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Նոյեմբերի 29-ին լրանում է հայ նոր պետականության՝ Հայաստանի Սովետական Հանրապետության 63-րդ տարեդարձը: Ողջ հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, գիտակից նախանձախնդրությամբ և հպարտությամբ է նշում այդ պանծալի հոբելյանը: Այո՛, գիտակից նախանձախնդրությամբ, որովհետև մեր բազմաչարչար ժողովուրդը քաջ գիտակցում է պատմական այն մեծ դերն ու նշանակությունը, որ ունեցավ Նոյեմբերյան արշալույսը մեր ժողովրդի կյանքում, այն է՝ փրկություն և վերածնունդ. նշում է նաև հպարտությամբ, քանի որ մեր տեսլապաշտ ժողովուրդը, որ գիտեր խաչքար կերտել և նրա կախարդական նախշերի մեջ իր գոյատևման անմահ խորհուրդը դնել, որ գիտեր ձեռագիր ծաղկել և այդ մանրանկարների մեջ իր ապագա վերածնդյան հույսն ու տենչանքը մարմնավորել, դարերի ստրկությունից հետո վերջապես կարողացավ նվաճել իր հայրենի հողն ու պատիվը, իր ապատությունն ու իր խաղաղությունը, կարողացավ իրականության վերածել իր լուսաբնակ նախնյաց տեսիլքը:

Լավ հասկանալու համար նոյեմբերի 29-ի խորհուրդը, հարկավոր է մի փոքր ակնարկ նետել մեր ժողովրդի պատմության, հատկապես վերջին շրջանի արյունոտ պատմության վրա: Անցյալի ավելի քան վեց հարյուր տարիների անընդմեջ բռնությունները, մահաբեր հողմերն ու թափված արյան հեղեղները երբե՛ք չկարողացան մեր ժողովրդի սրտում մարել պայծառ ապագայի հույսն ու հավատը: Եղել են ժամանակներ, երբ թվացել է, թե պետք է ընդմիշտ մարեր այդ հավատը: Եղավ ժամանակ, երբ գերեզմանվեց մեր ժողովրդի մի ստվար հատվածը 1915 թ. Ապրիլյան եղեռնին: Բայց հայերը նորից ոտ գտան և Սարդարապատի հերոսամարտով ապացուցեցին, որ դեռևս ապրում են, շնչում ու կարող են հաղթանակել:

Արյունարբու թշնամին չէր հագեցել շուրջ երկու միլիոն հայ նահատակների անմեղ արյամբ և ծրագրել էր գերեզմանել նաև Արևելյան Հայաստանը: Թվում է, թե 1920-ին Ալեքսանդրապոլի տխրահռչակ դաշնագրով պետք է ընդմիշտ մարեր հայ ժողովրդի փրկության հույսը: Բայց ահա հնչեց փրկության ժամը, երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի ամոթալի պայմանագիրը և դուրս շպրտվեց թշնամին Հայաստանից: Փաստորեն, ինչպես մի առիթով նշել է Վեհափառ Հայրապետը իր ճառերից մեկում, **«Նոյեմբեր 29-ով փրկվեցավ այն, ինչ որ շահած էինք Սարդարապատով: Սա կենսական կարևորություն ունեցող ճշմարտություն մըն է: Նոյեմբեր 29-ն է, որ պատռեց սև դաշնագիրը Ալեքսանդրապոլի, դուրս վտարեց Քարաբեքիր փաշայի զորքերը Հայաստանեն և վերջնականապես ամրացուց հիմքերը նորաստեղծ հայ պետության՝ անվտանգության, խաղաղության և աննախընթաց զարգացումի և վերաշինության պայմաններու մեջ»** (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, գիրք չորրորդ, էջ 122):

Նոյեմբերի 29-ով մեր ժողովուրդը բռնեց խաղաղ շինարարության և բարգավաճման փառավոր ուղի: Իսկ դրա ապացույցը հենց այսօրվա Հայաստանն է՝ իր միլիոնանոց

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻՑ. ԿԵՆՏՐՈՆՈՒՄ՝ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Երևանով, իր շեն ու բարեկարգ քաղաքներով ու գյուղերով, իր Ծիծեռնակաբերդով, Արփա-Սևանով, գիտությունների ակադեմիայով ու Մատենադարանով, իր նորակառույց մետրոյով ու «Զվարթնոց» օդանավակայանով, մարվա-համերգային համալիրով...

Եվ մի պահ խորհում ես. ի՞նչ կլիներ, եթե մեր երկրում չհաստատվեին խորհրդային կարգեր, ի՞նչ կլիներ, եթե չջողար Նոյեմբերյան արշալույսը: Պատասխանը ավելի քան սարսափազդու է: Մեր ժողովուրդը որպես ազգություն հավետ կկորչեր աշխարհի երեսից: Իսկ արտասահմանի մեր հայ եղբայրները կդառնային թանգարանային առարկա:

Այսօր մեր ժողովրդի բոլոր վավակները, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, պետք է լավ ըմբռնեն նոյեմբերի 29-ի այս հիմնական խորհուրդը՝ փրկություն, վերածնունդ ու գոյատևում:

Նոյեմբերյան այս տոներին իր սրտաբուխ օրհնությունն ու ջերմ խնդակցությունն է բերում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր հայրենասեր Հայրապետի գլխավորությամբ, հայրենիքի բարօրության, խաղաղության և ապահովության համար սրտագին աղոթքով. **«Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Արևելեան կողմն աշխարհի, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:**

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերջին 63 տարին անցել է Հայաստանում սովետական կարգերի ամրապնդման պայմաններում, հայրենի պետությունն խաղաղ և ապահով հովանու տակ: Մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին լավ գիտեն խաղաղության գինը և, քաղելով նրա պտուղները, ըստ արժանվույն են գնահատում այն: 63 տարի է, ինչ հայոց հողը չի կոխոտվել ոսոխի կողմից: Եվ այդ խաղաղ տարիներին մայր հայրենիքի կողքին բարգավաճել է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր հոգևոր կյանքի վարթոնքով, պատմական հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների վերանորոգումով, հատկապես, ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը, **«Ս. Էջմիածնի անանախընթաց շքեղացումով»:** Մեր Եկեղեցին, որ լիովի վայելում է հայրենի կառավարության բարյացակամությունը, օրավուր ծաղկում ու շենանում է:

Հայ Եկեղեցու ներկայիս հովվապետը՝ Տ. Տ. Վազգեն Առաջինը, հետևելով իր հայրենասեր նախորդների իմաստուն ընթացքին. իր գործոն մասնակցությունն է բերում հայրենի երկրի վերաշինմանն ու հայ ժողովրդի ազգային միասնության կենսագործմանը:

Այո՛, Ասենայն Հայոց Հայրապետը մեր օրերի խորհրդանիշն է դարձել մայր հայրենիքի և արտասահմանի հայության միասնությունը պահպանելու և ամրապնդելու գործում:

Թող է՛լ ավելի ծաղկի ու բարգավաճի մեր մայր հայրենիքը, թող է՛լ ավելի պայծառանա մեր Ս. Եկեղեցին: Թող Նախախնամության Աջով և հայ ժողովրդի աշխատունակ բազուկներով ու ոգեղեն հանճարով ընդմիշտ օրհնվի, պահպանվի և բարեկարդվի **«Արևելեան կողմն աշխարհի, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:**